

ԵՂԻՍ ԱՐՃԻՇՆՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԹՈՒՂԹԸ

Ա. Ն. ՀԱԿՈՐՅԱՆ

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» (այսուհետև՝ ԱՊ) աղբյուրների ճիշտ որոշումը և ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ ուսումնասիրողներին հնարավորություն է ընձեռում գործ ունենալ անմիջապես հին աղբյուրների տեղեկությունների հետ, առանձնացնել ԱՊ հեղինակի լրացումներն ու ավելացումները: Վերջինները ի մի բերելով՝ մենք պարզ պատկերացում ենք ստանում X դարի վերջի հեղինակի գիտելիքների, աշխարհայացքի, նպատակների և կատարած ինքնուրույն աշխատանքի մասին: Հասկանալի է, որ ԱՊ յուրաքանչյուր նոր աղբյուրի բացահայտումը և համեմատությունը Կաղանկատվացու բնագրի հետ ավելի է խորացնում մեր իմացությունը հայկական միջնադարի ամենահեռաբերբեր ու բարդ հեղինակներից մեկի մասին:

Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 2966 (XVII դար) և 3062 (XVIII դար) ձեռագրերում՝ դրսևում է մի փաստաթուղթ՝ «Յաղագս Եղիայի Հայոց կաթողիկոսի» վերտառությամբ, որը կարելի է համարել ԱՊ հատվածներից մեկի աղբյուրը: ԱՊ խնդրո առարկա մասում (III, 3—10) Կաղանկատվացին մանրամասն պատմում է Եղիա Արճիշեցի Հայոց կաթողիկոսի գործունեության մասին Աղվանքում: Եղիային դիմել էին Աղվանից իշխանները և հոգեվորականները, որոնք դժգոհ էին քաղկեդոնականություն ընդունած և բյուզանդական կողմնորոշում ունեցող իրենց Ներսես (Բակուր) կաթողիկոսից (III, 3 և III, 4): Եղիան իրողությունը տեղյակ է պահում արաբական խալիֆային (III, 7) և նրանից ստանում պատասխան թուղթ (III, 6): Կաղանկատվացին այնուհետև պատմում է, որ Եղիան զալիս է Պարտավ, Աղվանից իշխանների օգնությամբ ձերբակալում Ներսեսին ու նրա գործակից Սալարաս իշխանունուն: Պարտավում հրավիրված ժողովը Աղվանից կաթողիկոս է ընտրում Սիմեոնին և ընդունում մի քանի փաստաթղթեր՝ ուղղված քաղկեդոնականության դեմ (Կաղանկատվացին ներառնում է դրանք իր երկու մեջ): Այդ փաստաթղթերն են.

«Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան և հաստատութեան ուխտի Հայոց և Աղուանից» (III, 8).

«Գիր պայմանի տեառն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի առ Աղուանս».

«Գիր անուանց նախարարաց Աղուանից ըստ նախադասութեանն, զոր ներքինին Աբղամէլիքի էմիր Մումինոյ տարաւ և եղ ի դուանն արքունի (սակս

1 Ձեռագրերի նկարագրությունը տե՛ս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Տ. Ա., Երևան, 1965, էջ 912 և 930—931: «Արարատ», 1902, էջ 561—563: Այս ժողովածունքը ներկայացնում են փաստաթղթերի ու փոքրածավալ աշխատությունների հավաքածուներ, որ երբեմն անվանում են «Գիրք թղթոցի» էջմիածնական օրինակ:

այսորիկ, դի եթէ որ ի սոցանէ գտանիցի երկաբնակ հղեալ՝ սրով և գերութեամբ սպառեացի» (III, 10):

Թերևս նույն ժողովում են ընդունվել նաև «Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի յետ կործանման Ներսիսի» (III, 11), թեև այդ մասին ուղղակի վկայություն չկա:

Թվարկված փաստաթղթերից սուաջին երկուսը վերաբերում են Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների հարաբերություններին: Եղիայի «Պայմանի գրի» վերջում ասվում է. «...ես՝ Եղիա Հայոց կաթողիկոս հանդերձ իմ եպիսկոպոսոքս առի զմիատուրեան գիրդ ի ժողովոյդ Աղուանից, և ետու զայս պայմանի գիր ձեզ. դի մի սք յանդհնեսցի թիրեւ ինչ զեղեալ ուխտադրութիւնդ: Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատանեաւ ետու ի պահեստի Ներսմերճի՝ ուխտին ի ձեռն սրբասիրի Քշիկայ հօր՝ պայման անհոգութեան»: Գովար յ որոշել, թե ինչո՞ւ էին ընդունված փաստաթղթերը պահպանության թողնուվում Ներսմիճի վանքում և ոչ, ասենք, Պարտավի կաթողիկոսարանում: Սակայն տվյալ դեպքում կարևորն այն է, որ Աղվանքում ինչ-որ տեղ դրանք պահ էին տրվում: Նկատի առնելով դիվանագիտական նորմերը, բնական է ենթադրել, որ ընդունված փաստաթղթերից մի-մի օրինակ էլ պետի տարվեր Հայոց կաթողիկոսարանի դիվանում պահվելու:

Սատեանդարսնի վերոհիշյալ ձեռագրերի փաստաթղթի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, թե այն Պարտավի ժողովում ընդունված «Գիր պայմանի Տեառն Եղիայի Հայոց կաթողիկոսի առ Աղուանս» թղթի Հայաստան բերված օրինակն է: Զեռագրերում և Ա.Պ մեջ թղթերի սկիզբը գրեթե նույնն է:

Ձեռագիր № 2966, էջ 120բ  
(№ 3062՝ 199բ)

Ա.Պ, III, 9

Յառաջ քան զայն շարժումն որ յաղագս հաւատոյ լեալ էր վասն Բակուրի, որ անուանեցան Ներսէս, որ եղև զկաթողիկոս Աղուանից, որ ներկեալ էր պիղծ աղանդն Քաղկեդոնի եւ զարձուցեալ էր զբազումս յիւր ուխտին իւրով շարութեամբն, եւ բազում նեղութիւնս անցուցանէր ընդ եպիսկոպոսունսն եւ ընդ բահանայս եւ ընդ կրանաւորս: Մինչև եկի ես՝ Եղիա, շնորհին Աստուծոյ կաթողիկոս Հայոց, հանդերձ եպիսկոպոսակցաւ իմովք, որք էին այսօրիկ (տրվում են Եղիայի ուղեկիցների անունները—Ա. Հ.)<sup>2</sup>, ի Պարտաւ շահաստան, որք ելին ընդ յուրաջ մեր ամենայն լուծարութեամբ եպիսկոպոսունք եւ մնծամեծ իշխանք եւ ամենայն ուխտ եկեղեցւոյ (թվում է Աղվանից հոգևորականներին և իշ-

ճարժումն այսփառին Ներսիսի, որ յԱղուանս էր, սակս հաւատոյ, և զներկումն կրօնին Քաղկեդոնի ի բազմաց սերմանեալ յոգիս, և զխորամանկ շարութեամբ իւրով վտանգելն զեպիսկոպոսունս, զքահանայս և զկրօնաւորս, զգացեալ իմ Եղիայի Հայոց կաթողիկոսի՝ եկի հանդերձ իմովք եպիսկոպոսօք յԱղուանս ի զերահուակ բաղաքդ Պարտաւ: Եւ ժողովեցան առ իս հոգևորք և մարմնաւորք և ցուցին ինձ զայն գիր...:

<sup>2</sup> Ա.Պ տարրեր ձեռագրերում և հրատարակություններում՝ Ներսմերճի, Ներմեհրի, Ներսմիճի վանք, Ճիշտը վերջին ձևն է:

<sup>3</sup> «Յառաջ քան զայս» բառերը թերևս ժողովածուն կազմողինն են:

<sup>4</sup> Ա.Պ մեջ նրանք կան միայն նախորդ փաստաթղթում, ընդ որում համապատասխանությունը բառացի է:

խաններին—Ա. Հ.): Ելեալ ընդ առաջ մեր  
ամենայնքն մեծաւ ուրախութեամբ ընկալան  
զմեզ, որք եւ ասէին իռկ...

Այստեղից ԱՊ համապատասխան գլուխը մի քանի խոսքով ամփոփում է ժողովի որոշումը և անցնում վերջաբանին, որ տվեցինք վերևում, այնինչ առանձնական թուղթը մանրամասն տալիս է ժողովում ընդունված հավատո հանգանակը, այն շքնդոնողների դեմ ուղղված անեծքի բանաձևը և Հայոց ու Աղվանից եկեղեցիների հարաբերությունների մասին որոշումը: Այս բոլորը չկա ԱՊ մեջ ընդգրկված «Պայմանի գրում», սակայն կա նախորդ փաստաթղթում՝ «Միաբանությունից ձեռնարկում», որ առավ Եղիան Աղվանից կողմից: Ընդ որում համապատասխանությունը, ճիշտ այնպես, ինչպես Եղիայի ուղեկիցների և դիմավորողների անունների թվարկման մեջ, բառացի է: Հետևությունը, կարծում ենք, մեկը կարող է լինել. Պարտավի ժողովում երկու կողմերի ստորագրած փաստաթղթերում (Աղվանից կողմի միաբանության և ուխտի մասին Եղիայի տված ձեռնարկում և Եղիայի՝ Աղվանից կողմին տված պայմանի թղթում) եղել է որոշումների մոտավորապես նույն բանաձևը, մի բան, որ կարելի էր ենթադրել թեկուզ միայն դիվանագիտական նորմալը նրկատի առնելով: Մովսես Կաղանկատվացին, որ ներառել է իր հրկի մեջ երկու փաստաթղթերն էլ, առաջինը տալիս է ամբողջությամբ, իսկ երկրորդից բաց է թողնում այն հատվածները, որ արդեն արտագրել էր առաջինում. այսպիսով, «Եղիայի պայմանի գրի» լրիվ բնագիրը պահպանվել է «Գիրք թղթոցում»:

«Գիրք թղթոցի» փաստաթղթի վերջը ևս նման է ոչ թե «Պայմանի գրի», այլ «Միաբանության ձեռնարկի» վերջին: ԱՊ մեջ «Պայմանի գրին» ավարտվում է ընդունված փաստաթղթերի պահպանության մասին բանաձևով («ետու ի պահեստի ի ներամերհի ուխտին»): Թերևս բնական է, որ Հայաստան բերված օրինակում բացակայում է Աղվանքում փաստաթղթերի պահպանման այդ բանաձևը: Դրա փոխարեն հայկական օրինակն ունի իր համար ավելի բնական վերջաբան՝ «Եւ գրեցաւ գիրս այս վկայութեամբ երկոցունց կողմանց ի ՃԾԲ թուականութեան Հայոց եւ ՁԵ թուականութեան Տաճկաց»: «Միաբանութեան ձեռնարկն» այստեղ ունի «ՁԵ ամի Տաճկաց և ի հայ թուականիս ՃԽԸ յամսեանն հրոտից: Եւ կնքեցաւ կամովք մերովք և մատանեօք, որոց անուանք ի վերոյ գրեալ են»<sup>5</sup>:

Ինչևէ, մեզ համար այստեղ կարևորն այն է, որ «Գիրք թղթոցի» փաստաթղթում ներկայացված է Պարտավի ժողովի որոշման բանաձևը, որը եթե ոչ բառացի, ապա գոնե սկզբունքային հարցերում պիտի համընկնի Կաղանկատվացու ներկայացրած «Միաբանության ձեռնարկի» բանաձևին: Բանաձևերի համեմատությունը բերում է անսպասելի և շատ կարևոր արդյունքների, որոնք թույլ են տալիս որոշել ԱՊ բնագրի պատմության մի շարք խնդիրներ:

ԱՊ հնագույն ձեռագիրը (պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, № 1531) գրված է 1289 թ.: Մյուս հնագույն ձեռագրերը գրված են XVII դարից ոչ շուտ: Հասկանալի է, թե ինչպիսի նշանակություն ունի 1289 թ. ձեռագիրը Կաղանկատվացու նախնական բնագրի մասին գաղափար կազմելու գործում: Սակայն հնագույն ձեռագիրն ունի մի շարք թերություններ, որոնք

<sup>5</sup> Ապ, III, 8:

ղեկու XIX դարի վերջին ուսումնասիրել է հաշիկ Դադյանը<sup>6</sup>: XVII դարի վերջում Զաքարիա Քանաքեռցին վերանորոգել է ձեռագրի մի քանի թերթեր. այդ ժամանակ կորել է երկու մագաղաթյա թերթ ԱՊ III, 20 գլխի մի ընդարձակ հատվածով: Ավելի ուշ ինչ-որ մեկը քերել է ԱՊ բնագրի երեք փոքրիկ հատվածներ և գրել այլ տեքստ: Շեղանկալից առաջին հատվածը և նաև հնագույն ձեռագրից կատարվել են մի շարք ընդօրինակություններ, որոնք էլ հիմք են ծառայել Կաղանկատվացու բնագրի 1860 թ. երկու հրատարակություններին, ինչպես նաև 1861 թ. ռուսերեն թարգմանության համար: Ի. Դադյանը «Արարատ» ամսագրում հրատարակեց ԱՊ III, 20 գլխի պակասող հատվածը՝ ըստ 1289 թ. ձեռագրից անկախ ծագում ունեցող ձեռագրերի (ուսումնասիրողներն՝ կոզմից ընդունված է անվանել վերջիններս ԱՊ ձեռագրերի Բ խումբ. ձեռագրերի Ա խումբ են կոչվում հնագույն ձեռագիրը և նրան հանգող ընդօրինակությունները): Խ. Դադյանը, բնականաբար, ենթադրում է, որ քերված-փոխված հատվածների նախնական բնագիրը պահպանել են Բ խմբի ձեռագրերը: Ի թիվս այլ ուսումնասիրողների, այս տեսակետին է նաև Չ. Դաուսեթը, ոչը ԱՊ անգլերեն թարգմանության մեջ երեք հատվածներում զննում է Բ խմբի տեքստը: Իրոք մյուս հատվածներում, ուր Բ խմբի ձեռագրերը տարբերություններ ունեն 1289 թ. հնագույն ձեռագրից (իսկ այդպիսիք, անկախ արհեստականորեն առաջ եկածներից, քիչ չեն), Դաուսեթը ներկայացնում է ըստ Ա խմբի ընթերցումների: Այսպիսով, Դաուսեթը ճշմարտացիորեն գտնում է, որ ԱՊ նախնական բնագրին ավելի մոտ է հնագույն ձեռագիրը, բացառությամբ փոխված երեք հատվածների: Պարզ է, որ այդ հատվածներում էլ հնագույն ձեռագիրն ունեցել է նույն տեքստը, որ կա Բ խմբի ձեռագրերում:

Ինչպիսի՞ պարադաներում է կատարվել ԱՊ երեք հատվածների ջնջման ու փոփոխման գործը: Խ. Դադյանը ենթադրում է, թե դա կատարվել է այն ժամանակ, երբ Աղվանից կաթողիկոսությունը պայքարում էր էջմիածնի կաթողիկոսության ենթակայությունից դուրս գալու համար. էջմիածնի կաթողիկոսները իրենց ձգտումները հիմնավորում էին այն տեսությամբ, թե Աղվանից կաթողիկոսները ի սկզբանե ենթակա են եղել հայոց կաթողիկոսներին. այդ տեսությունից շեղվող մի քանի հատվածներ Կաղանկատվացու պատմության հնագույն ձեռագրում ջնջվում են և փոխվում հօգուտ էջմիածնի. դա կատարվում է 1761 թ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսի հրամանով և Ղունկիանոս դպրի ձեռքով: Այս գրություններ ընդունում և կրկնում է Ֆ. Մամեդովան<sup>7</sup>: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրողությունը բոլորովին այլ է:

ԱՊ հնագույն ձեռագրի փոփոխությունները կատարված են I, 9, III, 3 և III, 23 գլուխներում: Սրանցից երկրորդը միաբանության այն «ձեռնարկն» է, որի որոշ իմաստով աղբյուրն է նորահայտ թուղթը: Ինչպես վերևում նշե-

<sup>6</sup> Խ. Վ. (Դադյան), Մովսէս Կաղանկատվացու Աղուանից պատմության Մայր Աթոռ Ստանկարանում գտնուած ձեռագիր օրինակները, «Արարատ», 1895, էջ 235—38, 333—48, 388—90, 424—26: Խ. Վ. (Դադյան), Նիթեր Աղուանից պատմության ուսումնասիրության համար, «Արարատ», 1897, էջ 67—70, 161—163:

<sup>7</sup> Փ. Մամեդովա, «История албан» Моисея Каланкатуйского как источник общественного строю раннесредневековой Албании, Баку, 1977, стр. 27 и далее.

ցինք՝ երկու փաստաթղթերում պիտի ընդհանուր գծերով համընկնեն որոշման բանաձևերը: 1289 թ. ձեռագրում ջնջումը կատարված է հենց բանաձևի մի հատվածում: Համեմատենք ջնջված տեղի հին և նոր տեքստերը նորահայտ փաստաթղթի համապատասխան հատվածի հետ.

Ք խմբի տեքստը  
(«Առաջատ», 1897,  
էջ 68—69)

Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթուղիկոսութեան մերոյ նախկին յերուսաղէմէ ընկալան, մինչև ցտուրքն Գրիգորիս, և անցի ցայժմ յեպիսկոպոսաց մերոց առնովն: Իսկ այժմ դի անփորձ և անընտրողք եղև և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, թէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի միաբանութեամբ աշխարհիս: Եւ Հայոց արոտոյն ձեռնադրութիւն Աղուանից արոտակալէն լիցի, զի այս երիցագոյն է, քան զՀայոցդ: Եւ յայսմ պայմանէ մի լիցի իշխանութիւն ումեք արտաքոյ նշանել և ալլաձևս ինչ առնել: Ապա եթէ ոչ անվաներ եւ ունայն լիցի եւ մի հաստատեսցի ձեռնադրութիւնն երկախանչիւրցն:

Ա խմբի տեքստը (Մոսկ-վա, 1860, էջ 242)

Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթուղիկոսացս Աղուանից այսպէս կանոնեցաք, զի սուղ ինչ ժամանակ կարուպիկոսք մեր զկարգն յեպիսկոպոսաց մերոց առին, իսկ այժմ դի անփորձ և անընտրող գործով եղև և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, զի ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս՝ որպէս և էրն ի սրբոյն Գրիգորայանտի, զի անդ ընկալաք զուսատուրութիւն. և ճշմարտութեամբ գիտեմք, զի գորդով ընտրէք՝ հաճոյ Աստուծոյ է և մեք: Եւ յայսմ պայմանէ մի լիցի իշխանութիւն ումեք արտաքոյ նշանել և նորաձեռութեամբ ինչ առնել. ապա եթէ ոչ՝ անվաներ եւ ունայն լիցի և մի համարեսցի ձեռնադրութիւնն այն ընդունելի:

Ձևագիր № 2966,  
էջ 200ա

ևս եւ վասն ձեռնադրութեան աթոռոյս Աղուանից ամենեքեան մեր միաբանութեամբ այսպէս կանոնեցաք. քանզի սուղ ինչ ժամանակս յաշխարհիս մերոյ կարուպիկոսք յեպիսկոպոսաց նեոնադրեցան մինչեւ ցայժմ եւ լուծին զղաշինս ուխտիս, որ ի մէջ Հայոց և Աղուանից, եւ վասն դի անփորձ եւ անընտրողք գործովք եւ հաւատովք ձեռնադրեցան, յորոց ի ձեռն հերձուածեցաւ աշխարհս մեր, եւ պատանեցաւ միաբանութիւն ուղիղ դաւանութեան հաւատոյս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ սրբութեանդ, եթէ ձեռնադրութիւն կաթուղիկոսութեանս մերոյ ի աթոռոյ սրբոյն Գրիգորի, որպէս եւ ի սկզբանէ իսկ էր, միաբանութեամբ եպիսկոպոսաւք եւ ազատաց ի սուրբ Գրիգոր եկեղեցն եւ անդ ձեռնադրեսցեն որպէս եւ երանելի հարքն մեր, զի անդ իսկ ընկալաք զուսատուրութիւն, եւ անտի իսկ եղև մեզ փրկութեան սկիզբն եւ առիթ, զի հըշմարտութեամբ գիտեմք, թէ գորդով ընտրէք եւ ընդ փորձ հանէք, քա Աստուծոյ հաճոյ լինի եւ մեզ փրկութեան պատհառ: Եւ մի լիցուք մեք իշխանութիւն եւ լանել արտաքոյ սահմանիս այսորիկ...8:

8 Ընդգծել ենք I սյունակում Ք խմբի ձեռագրերի պահած հատվածները, II սյունակում՝ հնագույն ձեռագրում քերված տեղերում զրվածը, III սյունակում՝ նորահայտ փաստաթղթի համապատասխան հատվածները:

Այս համեմատությունից պարզ է դառնում, որ ԱՊ հնարգույն ձեռագրում փոփոխություններ մտցնող անձնավորությունը իր առջև ունեցել է «Գիրք թղթոցի» փաստաթուղթը, որի տեղեկություններով էլ փոխարինել է III, 8-ի նախնական (Բ խմբի) տեքստը: Կատարվածի շարժառիթի մասին պատկերացում ենք ստանում Կաղանկատվացու բնագրի վերաբերյալ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կարծիքին ծանոթանալով: ԱՊ էջմիածնում պահվող մի ձեռագրի (ներկայումս ՄՄ № 1725) տողամիջում Սիմեոն Երևանցին թողել է հետևյալ դրույթունը. «Այսքանս, զոր ղնգնաձևացաք, սուտ էր եւ յետոյ ներմուծեալ ի սնապարծից յօղուտ անձանց. ղի ի յայլս պատմութիւնս ոչ գոյ բնաւ: Թուի թէ յԱնանիայ կաթողիկոսէն յետոյ այսպէս արարին Աղուանից սեււագլուխն»<sup>9</sup>: Այսպիսով, էջմիածնում տարածված էր այն կարծիքը, թե Կաղանկատվացու նախնական բնագրում չեն եղել այն հատվածները, որտեղ Աղվանից եկեղեցին հակադրվում էր Հայոց եկեղեցուն և ցույց տրվում առաջահամար: Ահա թե ինչու XVIII դարի մի անձնավորություն (Խ. Դադյանի կարծիքը, թե դա անպայման Ղունկիանոսն է, ծանրակշիռ ապացույցներ չունի) իրեն իրավունք է վերապահել հին աղբյուրի առկայության պայմաններում փոխել համապատասխան հատվածը՝ ըստ սկզբնաղբյուրի: Այդպես նա փորձել է վերականգնել ԱՊ նախնական բնագիրը՝ հանդես գալով ոչ թի սրայես խեղաթյուրող, այլ որպես պատմաբան-քննադատ և բնագրագետ (ճիշտ է՝ պարզամիտ, որի մասին ստորև):

ԱՊ III, 8 ուսումնասիրության այսպիսի արդյունքը ստիպում է մեկ անգամ ևս անդրադարձնալ փոփոխությունների մյուս երկու հատվածներին: Իսկապես, այդ հատվածների հետազոտությունից պարզվում է, որ այստեղ էլ բնագիրը փոփոխույլ փորձել է սկզբնաղբյուրների հիման վրա վերականգնել լորամաբանորին ավելի ճիշտ տեքստը: Այսպես, առաջին փոփոխումը կատարված է Անանիա Մոկացու «Յաղագս սուստամբութեան տանն Աղուանից» թղթի հիման վրա, որն այստեղ վերաշարադրում է ԱՊ իսկ նյութը: Բերում ենք համեմատվող հատվածները<sup>10</sup>.

Բ խումբ («Արարատ», 1897, էջ 68)

Իսկ զկնի սորին (Ունայրի—Ա. Ը.) մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց, ոչ թէ ի հարկէ ինչ, կամ թէ աագ զոլ զՀայս քան զԱղուանս հաշուեցան, այլ սակս մեծասանչ զօրութեանն, որ կատարեցաւ ի

Ա խումբ (Մոսկվա, 1860, էջ 12)

Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց, զի Ունայր արքան մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինիլ եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որ և այսու կանոնաւ կացին աշ-

Մոկացի («Արարատ», 1897, էջ 136—37)

(մանրամասն պատմում է ըստ Կաղանկատվացու Ունայրի օծումը Գրիգորի ձեռքով—Ա. Ը.)  
Յաղագս որոյ և յայս լուսաւորութեան եկեաց տեւեաց աշխարհս Հայոց և Աղուանից միակամ եղբայրութեամբ, որպէս և կարգեաց ս. Գրիգոր՝ լեալ

<sup>9</sup> Հմմտ. «Արարատ», 1897, էջ 68:

<sup>10</sup> Հնդգծել ենք առաջին սյունակում՝ Բ-ի պահպանած տեքստը, երկրորդ սյունակում՝ Ա-ի փոփոխված տեքստը, երրորդ սյունակում՝ Անանիա Մոկացու թղթի այն հատվածը, որի միտքն է տեղագրել Ա-ի հնագույն ձեռագրում XVIII դարի մեզ հետաքրքրող անձնավորությունը: 10 Հանդես, № 4

Հայր՝ կամ եղև սացա կամ  
մա հնազանդիլ արժանա-  
ժանակ գարմին սրբոյն  
Գրիգորի, կոչեցի՞ և հանե-  
ցան:

խաբին Հայոյ և Աղուանից  
համակամ եղբայրութեամ՝  
և անհակ ուխտի մի՞չև  
ցայսօր:

ձեռնայրութիւն տանն Աղու-  
անից ի Հայոց հայրապե-  
տէն, որ նստաւ յարոտ  
սրբոյն Գրիգորի կուսուր-  
չիէ... մի՞չև ցաւր Աբրա-  
համ Հայոց կարողիկոս:

Երրորդ դեպքում XVIII դարի գրիչը «Աղուանից սևազուխներին» ձեռքի գործ է համարել կաթողիկոսացանկի այն հատվածը, ուր Եղիշա առաքյալին հետևում էր Շուփհաղիշու կաթողիկոսը, իսկ Գրիգորիսը՝ Լուսավորչի թոռը, գտնվում էր ութերորդ տեղում: Գրիչը դրել է Գրիգորիսին երկրորդ տեղում. տանելով Շուփհաղիշույին՝ երրորդը: Դրանով նա համապատասխանեցնում էր կաթողիկոսների հերթականությունը հենց ԱՊ առաջին գրքի մի շարք հավաստի հաղորդումներին, ըստ որոնց Գրիգորիսը գործել էր IV դարի կեսերին, իսկ Շուփհաղիշուն՝ V դարի վերջերին: Ընդ որում՝ գրիչը առաջինը չէր, որ նկատում էր կաթողիկոսացանկում Շուփհաղիշույի և Գրիգորիսի տեղերի անհարկությունները: Դեռևս XIII դարում այդ հանգամանքը դարձացրել է Կիրակոս Գանձակեցուն<sup>11</sup>, նույն դարի մեկ այլ սլառմիչ՝ Մխիթար Այրիվանեցին արդեն փոխում է Շուփհաղիշույի և Գրիգորիսի տեղերը<sup>12</sup>: Այսպիսով, XVIII դարի գրիչը բոլոր հիմքերն ունի ուղղելու կաթողիկոսների հերթականությունը ըստ սկզբնաղբյուրների, համարելով, թե սխալները մտցվել են Կաղանկատվացու: Նախնական բնագրի մեջ «Աղվանից սևազուխներին» կողմից: Այստեղ նա արհարացի էր ճիշտ այնքան, ինչքան և նախորդ երկու հատվածներում:

Այնուամենայնիվ, մենք հակված ենք կարծելու, որ սխալվում էին XVIII դարի «բնագրագետները», համարելով, թե քննարկված հատվածները մտել են ԱՊ բնագրի մեջ հետադայում: Մովսես Կաղանկատվացու երկի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ վերը քննարկված հատվածները ոչընչով չեն տարբերվում ԱՊ բազմաթիվ այլ հատվածներից, ուր դրվում է Աղվանից եկեղեցու առաջահավատության և Հայոց եկեղեցուց անկախության հարցը: Մովսես Կաղանկատվացին Աղվանից կոչված եկեղեցու շահերի պաշտպանն է ու ջատագովը: I, 6-ում նա պատմում է Եղիշա առաքյալի առասպելը, որը, ձևոնադրվելով Հակոբի՝ տեառնեղբոր կողմից, հալիս է Աղվանք և լուսավորում երկիրը: Գիս ավանում Եղիշան կառուցում է եկեղեցի, «առաջին մայր եկեղեցեացն արևելից»,—ավելացնում է Կաղանկատվացին: I, 9-ում պատմվում է Ուռնայր արքայի կողմից Աղվանքն ամբողջովին լուսավորելու առասպելը: Կաղանկատվացին ավելացնում է. «Եւ այսք ի միում ժամանակի Լղեն հրաշք աստուածուստ»,—նկատի ունենալով Կոստանդիանոսի և Տրդատի լուսավորվելը: Եղիշայի և Մաշտոցի (I, 27—28) սլառումները Աղվանքի լուսավորությունը կապում են անմիջապես Երուսաղեմի հետ՝ յ տարբերություն ավելի վաղ շրջանի Գրիգորիսի ավանդության, որն Աղվանից լուսավորությունը բերում էր Հայաստանից: Վերջապես II, 47-ում Կաղանկատվացին ուղղակի գրում է, թե Աղվանքը Հայաստանից վաղ է լուսավորվել. «Քառասներորդ երրորդ ամ էր թուականն Հոռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայք ի հաւատս, և Աղուանից լուսաւորութիւնն երկու հարիւր և եօթանասուն ամ յառաջ էր»: Եր-

11 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, գլուխ Ժ, էջ 194:  
12 «Մխիթար Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1869, էջ 19:

ման ղրուլթն սպացուցելու համար ԱՊ հեղինակը փոխում է իր աղբյուրներին տեղեկությունները: Լավագույն օրինակը՝ նկատված դեռևս Ն. Ակիսյանի կողմից<sup>13</sup>, գտնվում է նույն II, 47 գլխում, ուր Կաղանկատվացին ներառնում է մի մեծ հատված Հայոց Աբրահամ կաթողիկոսի 609 թ. շրջաբերական թղթից: Բերում ենք համեմատաբար.

ԿԹ, Թիֆլիս, 1901.  
Էջ 193—94

ԱՊ, II, 47 (Մսեկվա, 1860,  
Էջ 214—15)

Յառաջագոյն բան ղմեղ կացեալքն յաստիեանի կաթողիկոսութեան՝ յԱղուանս. իսկ մեք ի Վիրս առ Կիրովն՝ որ կաթողիկոսն անուանի և նորին աթոռակիցը: ... (16 տող—Ա. 2.)... Վասն որոյ և ղյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հռոմիսն հատին..., մեք ղնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենեկմք մի հաղորդի...

Եթէ յառաջագոյն բան ղՀայոց աթոռակալութիւնն կացեալ աթոռակալութեանն Աղուանից, և ընդ մեղ համաձայն գոլով, նոցա կամակցութեամբ նզովեցաք և ընկեցաք ղԿիրովն ըստ հրամանի հարցն՝ մեք և Աղուանք. և ղնոյնն ի վերայ Վրաց հրամայեցաք՝ ամենեկն մի հաղորդի ընդ նոսա... (այնուհետև համապատասխանությունը բառացի է—Ա. 2.):

Ուսումնասիրողներից Շ. Սմբատյանը և Կ. Ղահրամանյանը գտնում են, թե սա գրչագրական սխալների հետևանքով առաջ եկած ընթերցում է<sup>14</sup>: Այդ տեսակետը ընդունել մենք չենք կարող, քանի որ բերված հատվածում տեսնում ենք հեղինակի նպատակամղված փոփոխումը՝ հօդուտ Աղվանից առաջահավատության իր դադարափարի: Նման մեկ այլ փոփոխման հանդիպեցինք նաև վերը քննարկված III, 8-ի բնագրում, ուր Կաղանկատվացին «Միաբանության ձեռնարկի» բանաձևի մեջ մտցրել էր այն միտքը, թե Հայոց կաթողիկոսը պիտի ձեռնադրվի Աղվանից աթոռակալի կողմից:

Անկասկած սխալ կլիներ բացարձակացնել ԱՊ հեղինակի աշխարհայացքի՝ վերը քննարկված դիժը: Կաղանկատվացին հայրենասեր է, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ջատագով<sup>15</sup>, ինչպես նաև միաբանակության ու Գրիգոր Լուսավորչի հաստատած հավատի շերմ պաշտպանը: Սակայն ԱՊ ներկայացված հատվածները (իսկ ուշագրի ընթերցողը կգտնի և այլ հատվածներ) ցույց են տալիս, որ եկեղեցական հարաբերությունների հետ կապված հարցերում Մովսես Կաղանկատվացին անվերապահորեն Աղվանից եկեղեցու դիրքերում է: X դարում, երբ Հայոց Բագրատունիների թագավորությունը՝ հետո ըզհետև հրաժարվելով ամուր կենտրոնացված թագավորություն ստեղծելու մտքից, անկախություն էր շնորհում այս ու այն մարզին, երբ ֆեոդալական երկպառակությունների հետևանքով ավելի էին անկախանում Հայոց ժայռամասերի իշխանները, երբ անկախության էին ձգտում հոգևոր տերերը, նրանց թվում և Աղվանից կաթողիկոսությունը, մի բան, որ առավել ցայտուն երևում է Անանիա Մոկացու թղթի վկայություններից, երբ Հովհաննես Դրասխաս-

13 Ն. Ակիսյան, Մովսես Դասխուրանցի (կողմած Կաղանկատվացի) և իր Պատմություն Աղվանից, Վիեննա, 1970, էջ 73:

14 Հմմտ. Շ. Սմբատյան, Երկու ճշտում Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1: Կ. Ղահրամանյան, Եկեղեցական վավերագրերն ու թղթերը որպես «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբյուր, «Էջմիածին», 1973, № 6, էջ 43—44:

15 Այս մասին մանրամասն տե՛ս Կ. Ղահրամանյան, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը հայ մատենագրության համակարգի մեջ, Երևան, 1973:



նակերտացին գրում էր «Հայոց պատմություն»՝ անվերջապահորեն բարձրացնելով Բագրատունիներին, իսկ թուվմա Արծրունին ու Անանուն զրույցագիրը գովերգում էին Արծրունյաց իշխաններին<sup>16</sup>, X դարում, այսպիսի պայմաններում, Մովսես Կաղանկատվացին հանդես է գալիս, որպես Աղվանից աշխարհի, Հայոց Արևելից կողմանց հոգևոր ու աշխարհիկ տերերի շահերի արտահայտիչ ու պաշտպան և Փառիսոսի նորաստեղծ թաշավորության գովերգու։ Այսպիսով, բազմաթիվ անխաթար հատվածների կողքին ԱՊ մեզ հասած բնականորեն հեղինակի գրչին են պատկանում նաև այն հատվածները, որտեղ էրկի հնագույն ձեռագրում ինչ-որ մեկի կողմից փոփոխվել են XVII դարում<sup>17</sup>։

Հրատարակելով Եղիա Արճիշեցու նորահայտ թուղթը, մենք հույս ունենք, որ այն Աղվանից պատմության ուսումնասիրողներին կտա թե՛ նոր սլաշահական նյութեր և թե՛ հնարավորություն՝ Կաղանկատվացու բնագրում կատարելու այլ ճշգրտումներ։ Վերջին առումով պետք է ավելացնել մի քանի խոսք փաստաթղթում պարունակվող թվականի մասին։ ԱՊ մեզ հայտնի բոլոր ձեռագրերում առկա է III, 8 գլխի «Ձեռնարկի» հետևյալ թվագրումը՝ Հայոց Ճեղ և Տաճկաց Ձեռն Հայոց Ճեղ՝ 148 թ. ընկնում է 649—700 թթ., իսկ Հիշարայի Ձեռն՝ 704 թ.։ Սրանց շահանքներում պատճառով դժարանում էր Պարտավի ժողովի ժամանակը որոշելը, թեպետ ուսումնասիրողների մեծագույն մասը ճիշտ էր համարում 704 թ., քանի որ Եղիա Արճիշեցին կաթողիկոս է դարձել 703-ին։ Նորահայտ թղթում պարունակվող թվագրումը թույլ է տալիս հաստատապես որոշել ժողովի թվականը՝ 704, քանի որ երկու թվագրումները համընկնում են։ Նորահայտ թղթի տված Հայոց ՃԾԲ՝ 152 թ. ընկնում է 703—704 թթ.։ Հաշվի առնելով Կաղանկատվացու բնագրում պահպանված վերջին թվումը հրատարակած ամսվա մասին, կարողանում ենք Դյուրբիեի աղյուսակի օգնությամբ որոշել<sup>18</sup>, որ Պարտավի ժողովը տեղի է ունեցել 704 թ. փետրվարի 27-ի և մարտի 28-ի միջև։ ԱՊ հաղորդած «Ճեղ»-ն «ՃԾԲ»-ի փոխարեն կարելի է բացատրել, թերևս, հետևյալ կերպ։ Կաղանկատվացուն հասել է, ըստ երևույթի, գրական սխալի արդյունք ՃԾԸ ձևը (Բ տառը հեշտությամբ կարող է շփոթվել Ը-ի հետ, եթե հորիզոնական գծիկը փոքր-ինչ ցածր դրվի)։ Կաղանկատվացին, լավ իմանալով, որ Հայոց ՃԾԳ-ին (մեր կարծիքով պիտի լինի ՃԾԴ. Գ և Դ տառերը դրիչները հաճախ են շփոթում) արաբները գերեցին ու Ասորիք տարան Պարտավի ժողովի մասնակից Շերո իշխանին (III, 16), հետևաբար ՃԾԸ-ին նա շեր կարող Աղվանքում լինել, փոխվել է վերջին թվը Ճեղ-ի<sup>19</sup>։

<sup>16</sup> Հմտ. ն. Արճիշեց, Խորենացիական հարցն ու հ. վարդան Հայունի, «Անահիտ», 1938, էջ 87։

<sup>17</sup> ԱՊ հրատարակության պատրաստվող քննախմբի բնագրում պիտի դրվեն, անկասկած, այն ընթերցումները, որ տալիս են համապատասխան երեք հատվածների համար Բ խմբի ձեռագրերը։ Նյութ կողմից նույնքան անկասկած է, որ VIII դարի իրողությունն ուսումնասիրող պատմաբանը պիտի հենվի նորահայտ թղթի և ԱՊ վերջինիս համապատասխանող (Ա խմբի) ընթերցումների վրա։

<sup>18</sup> E. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, p. 385.

<sup>19</sup> Անհրատեղի է նշել, որ Պարտավի ժողովի բնագրում փաստաթղթերի թվագրությունը այսպես կոչված Հայոց թվականով պաշտոնականորեն զրգարության այսպիսի թվագրման առաջին օրինակներից մեկն է։ Այս օրինակը միանում է փաստերի այն շարքին, որը թույլ է տվել

Պարտավի ժողովի ժամանակի ճշտումից հետո, թվում է, թե հնարավոր է ճշտել նաև մյուս ժողովի ժամանակը, որ հրավիրեց Սիմեոն կաթողիկոսի հաջորդ Միքայելը, և որի «սահմանադրութունը» պահպանվել է ՆՄ 2966 և 3062 ձեռագրերում ու հրատարակվել Սամվել Անեցու երկի ծանոթագրութուններում (Վաղարշապատ, 1893, էջ 286): Ըստ Աղվանից կաթողիկոսացանկի և II, 7-ի տեղեկության, Սիմեոնը վախճանվեց Պարտավի ժողովում ընտրվելուց սեկուլեկես տարի անց՝ այսինքն մատավորապես 705 թ. օգոստոսին: II, 16-ի հաղորդման համաձայն Շերո իշխանը գերվեց և այլ իշխանների հետ Ասորիք քշվեց Հայոց ՃԾԴ՝ 154 թ., որն ընկնում է 705 թ. ապրիլից մինչև 706 թ. մարտը<sup>20</sup>: Այսպիսի պայմաններում Միքայել կաթողիկոսի հրավիրած ժողովի ժամանակը որոշվում է մոտավորապես 705 թ. երկրորդ կեսում<sup>21</sup>:

Ներկայացնում ենք փաստաթուղթը ըստ հնագույն ձեռագրի (ՄՄ, № 2966. նշանակում ենք՝ ա) բնագրի, տալով մյուս ձեռագրի (ՄՄ, № 3062, նշանակում ենք՝ բ) տարրնթերցումները: Առանց ծանոթագրելու փոփոխում ենք ձեռագրային կետադրութունը և կիրառում ժամանակակից բանասերություն մեղ ընդունված տրոհում: Ամենուր օ-ն փոխում ենք աւ-ի և ւ-ը՝ եւ-ի: Հատուկ անունները թողնում ենք նույնությամբ՝ ծանոթագրելով ԱՊ տված ընթերցումներով:

### ՅԱՂԱԳՄ ԵՂԻԱՅԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Յառաջ քան դաս<sup>1</sup> շարժումն, որ յաղագս հաւտոտյ լեալ էր վասն Բակուրի, որ անուանեցան<sup>2</sup> ներսէս, որ եղեւ շկաթուղիկոս Աղուանից, որ ներկեալ էր՝ պիղծ աղանդն Քաղկեդոնի եւ դարձուցեալ էր զբազումս յիւր<sup>3</sup> ուխտէն իւրով յարութեամբն, եւ բաղում նեղութիւնս անցուցանէր ընդ կախկոպոսունսն եւ ընդ քահանայս եւ ընդ կրանաւորս: Մինչեւ<sup>4</sup> իկի ես՝ Եղիա, շնորհին Աստուծոյ կաթողիկոս Հայոց, հանդերձ եպիսկոպոսակցաւք իմովք, որք էին այսոքիկ:

Սարգիս Ամատունեաց եպիսկոպոս,  
 Սիմէոն Խոռխոռունեաց եպիսկոպոս,  
 Սարգիս Ըստապայճ եպիսկոպոս,  
 Յովհաննէս վարդապետ այլաւք եւ աշակերտաւք

Պ. Նուրադյանին մերժել է. Օրբելու առաջարած ավանդական տեսակետը, թե Հայոց թվականը սկսել է օգտագործվել միայն IX դարում: Տե՛ս Ս. Մ. Мурадян, Хронология систем летоисчисления по армянским источникам—«Армянская эра», «Вестник общественных наук» АН Армянской ССР, 1976, № 1.

<sup>20</sup> Հմմտ. E. DuLaugier, նշվ. աշխ., էջ 395:

<sup>21</sup> «Գիրք թղթցում» պահպանված փաստաթղթում կա «Հայոց ՁԸ թվին» թվագրումը (633—640), որն, անկասկած, սխալ է: Բաթիկյանը (Ք. Մ. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961. стр. 33) և Ն. Ակինյանը (նշվ. աշխ., էջ 377) գտնում են, որ պիտի ելած լինի «Ճաճկաց ՁԸ թիվ» (703—707), որը, այսպիսով, դարձյալ անխաթար ընթերցում համարվել չի կարող:

1 Տե՛ս հոդվածի 3 ծանոթագրությունը:

2 Բ.—անուանեցաւ:

3 Բ.—երկէր:

4 Երէն օր. էլ—իւր:

5 Բ.—մինչ:

6 Երկու օր. էլ—գսարգիս: ԱՊ, III, 8-ում—Սարգիս Ռստակաց:

ի Պարսաւ շահաստան: Որք ելին ընդ յառաջ մեր ամենայն յաւթարութեամբ  
եպիսկոպոսունք եւ մեծամեծ իշխանք եւ ամենայն բնաւ ուխտ եկեղեցոյ:

Յովհաննէս Կապաղակայ եպիսկոպոս,  
Սիմէոն Շոհայ<sup>7</sup> եպիսկոպոս,  
Սահակ Ամարասայ եպիսկոպոս,  
Սահակ Մեծ Կուսանից<sup>8</sup> եպիսկոպոս,

այլեւ քրիստոսասէր ամենագով ազոյտք.

աստուածապահ Շերոյ պատրիկ եւ Աղուանից իշխան,  
Ջալանքոյ<sup>9</sup> պատրիկ եւ Աղուանից սպարապետ,  
Վարդան պատրիկ եւ նորին եղբայր տէր Գաղիկ,  
Բաբ ի Հրայհատեան<sup>10</sup>,  
Վախտանգ ի Վարազմանեան,  
Պատրիկ ի Քորոյեան<sup>11</sup>,  
Վարազ ի Վարազվահան<sup>12</sup>,  
Թէոդորոս յԱնաստասեան,  
Ռոստոս ի Վարազաքեան  
Ջառմիհր ի Վարազքորդաքեան,  
Մահումատ ի Շերոյեան

եւ ամենայն ազատք աշխարհիս. նաեւ բազմութիւն սրբասէր կրանաւորաց.

Քշիկ Մեհր Նիրհաս<sup>14</sup> վանաց վանական,  
Գտայ վանաց վանական,  
Կատարոյ վանաց վանական,  
Դաւիթ Կաղանգատուաց վանական,  
Պետրոս Ստգունակերտի<sup>15</sup> վանական,  
Աղաժոբայ<sup>16</sup> վանականն

եւ այլ ճշմարիտք քահանայք, որք անխառն մնացեալ էին յամենայն աղանդոց: Ելեալ ընդ առաջ մեր ամենայնքն մեծաւ ուրախութեամբ ընկալան զմեզ, որք եւ ասէին իսկ.

«Այսար արհնեցաք եւ ընկալաք զկարգ եւ զհաւատ սրբոյն Գրիգորի եւ զամենայն ուղղափառացն զժողովսն: Զի մեր հոգեկիր հարանցն ընկալեալ է մինչև ցայժմ, վասն զի եւ էաք իսկ աշակերտք սրբոյն Գրիգորի եւ եղիցուք

7 Երկու օր. էլ այսպես: Կաղանկատվացու մոտ այս հատվածում—Հոշալայ, Հոդոյ, Հոշոյ, Հաշուայ:

8 Երկու օր. էլ այսպես: ԱՊ, III, 8-ում չիք՝ Սահակ Մեծ Կուսանից եպիսկոպոս:

9 Բ—Ջալանքո: ԱՊ մեջ—չուանքոյ:

10 ԱՊ մեջ—Հրահատեան:

11 ԱՊ մեջ—Քարոյեան:

12 Բ—Վարազվահանեան: ԱՊ մեջ—Վահան ի Վարազվահանեան:

13 ԱՊ մեջ—Ռոստոմ ի Վարազ Աքոյեան:

14 ԱՊ մեջ—Ներսմերհի, Ներսմիրհի, Ներսմիհրի:

15 ԱՊ մեջ—Տիգրանակերտի, Տկուակերտոյ:

16 ԱՊ մեջ—Պոդոս Աղաժոբայ:

մինչև ցնալիտեանս: Եւ յայսմեհետէ մի ումեք եղիցի իշխանութիւն ելանել յաւանդութենէ սրբոյն Գրիգորի եւ ի ձերում միաբանութենէդ: Ապա եթէ որ հանդիմանացի նորաձևութիւնս ինչ առնել արտաքոյ ճշմարտութենէն, եթէ յեպիսկոպոսաց որ իցէ, ի բարձրութենէ աթոռոյն անկցի, եւ եթէ ի քահանայից իցէ, լուծցի, եւ եթէ յաղատ որ իցէ, յեկեղեցւոյ Աստուծոյ որոշեացի և յընկերս մի խառնեացի, մինչ ի կարգ ուղղութեան եկեսցէ:

Նոյնպէս և վասն ձեռնադրութեան աթոռոյն Աղուանից ամենեքեան մեք միաբանութեամբ յայսպէս կանոնեցաք. քանզի սուղ ինչ ժամանակս յաշխարհիս մերոյ կաթողիկոսք յեպիսկոպոսաց ձեռնադրեցան մինչև ցայժմ եւ լուծին զղաշինս ուխտին, որ ի ՚Էջ Հայոց և Աղուանից, եւ վասն զի անփորձ և անկիրթ եւ անընտրողս գործովք եւ հաւատովք ձեռնադրեցան, յորոց ի ձեռն հերժուածեցաւ աշխարհս մեր, եւ պատառեցաւ միաբանութիւն ուղիղ դաւանութեան հաւատոյս, վասն այսորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ սրբութեանդ, եթէ ձեռնադրութիւն<sup>17</sup> կաթողիկոսութեանս մերոյ յաթոռոյ<sup>18</sup> սրբոյն Գրիգորի, որպէս եւ ի սկզբանէ իսկ էր, միաբանութեամբ եպիսկոպոսաւք և աղատաց ի սուրբ Գրիգոր եկեսցեն և անդ ձեռնադրեցեն<sup>19</sup>, որպէս եւ Լրանելի հարքն մեր, զի անդ իսկ ընկալաք զլուսատրութիւն, եւ անտի իսկ եղև մեզ փրկութեան սկիզբն և առիթ, զի ճշմարտութեամբ գիտեմք<sup>20</sup>, թէ զոր դուր ընտրէք, եւ ընդ փորձ հանէք, նա Աստուծոյ հաճոյ լինի եւ մեզ փրկութեան պատճառ:

Եւ մի լիցուք մեք իշխանութիւն ելնել արտաքոյ սահմանիս այսորիկ, զոր ընկալեալ էին յառաջագոյն հարքն մեր: Ապա եթէ դիմացցն արհամարհելով որ պահանջ միաբանութեան սահմանեալ կանոնիս ժողովոյս, գործի<sup>21</sup> արտաքոյ ճշմարիտ վարդապետութեան: Եթէ որ հանդիմանացի գործել եւ անցցէ ի դաշինս ուխտին, որ ի միջի մեր և ձերոյ սրբութեանդ եղեալ սահման հաստատութեան, ձեռնադրողքն<sup>22</sup> լուծցին ի պատուոյն, ով եւ իցէ, եւ դատ տացէ առաջի Աստուծոյ իբրեւ ժպիրհ եւ յանդուգն եւ անընտրողս<sup>23</sup> եւ իբրեւ զարհամարիտ<sup>24</sup> պատուիրանացն Աստուծոյ, եւ ձեռնադրութիւն անվաւեր եւ ընդունայն եւ սուտ եւ ի դատապարտութիւն եղիցի:

Արդ, որք վասն երկիւղին Աստուծոյ միաբանեացին սահմանադրութեան՝ մերոյ կանոնիս՝ արհնեալ եղիցի նա ի տեսանէ եւ յամենայն ուղղափառ ժողովոց Աստուծոյ եւ դասակից եղիցի սրբոց հարցն եւ ճշմարիտ հովուացն յարքայութեան երկնից: Իսկ որ դիմադարձ լիցի եւ արհամարհեսցէ եւ առ ոտն հարցի զհրամանս մեծի ժողովոյս, որ կանոնեալ սահմանեցաւ, ի մերմէ միաբանութենէս որոշեացի և յամենասուրբ հոգւոյն նզովեացի եւ մասն եւ բաժին ընդ անհաւատսն լիցի եւ խոստացեալ արքայութեան Քրիստոսի մի հասցէ՞:

Եւ գրեցաւ զիրս յայ վկայութեամբ երկոցունց կողմանց ի ՃԾԲ թուականութեան Հայոց եւ ՁԾ թուականութեան Տաճկաց:

17 Երկու. օր. էլ—ի ձեռնադրութիւն:

18 Երկու. օր. էլ—ի յաթոռոյ:

19 ք—ձեռնադրեցին:

20 ր—գիտիմք:

21 Երկու. օր. էլ—գործեն:

22 ք—ձեռնադրողքն:

23 ք—անընտրողս:

24 ք—զարհամարհողս:

## НОВОНАЙДЕННАЯ ГРАМОТА КАТОЛИКОСА ЕЛИИ АРЧИШЕЦИ

А. А. АКОПЯН

(Резюме)

Недавно мы обратили внимание на документ, содержащийся в двух рукописях Матенадарана (№ 2966—XVII в. и № 3062—XVIII в.). Он озаглавлен «Об армянском католикосе Елии» и является решением Партавского собора 704 г., о котором рассказывают главы 3—10 третьей книги «Истории Албании». Қаланкатуаци приводит здесь три документа собора (III, 8—10). Наш документ входит в III, 9 («Грамота армянского католикоса Елии албанцам»). В «Истории Албании» грамота дана в сокращенном виде. Қаланкатуаци, по-видимому, пропустил некоторые места (формулу решения об отношениях между армянским и албанским католикосатами, датировку), имеющиеся и в первом документе собора (III, 8—«Грамота о единстве и союзе, которую взял Елиа от албанского собора»).

Формула решения Партавского собора сохранилась в «Истории Албании» (III, 8) и в нововыявленном документе. Сравнение текстов формулы показывает, что Қаланкатуаци преднамеренно изменил отрывок текста и добавил от себя мысль о том, что армянских католикосов должны рукополагать албанские католикосы. В древнейшей рукописи «Истории Албании» (XIII в.) это несоответствие заметил какой-то писец XVII века. Считая искажение делом рук «албанских чернецов», он привел текст в «первоначальный вид», приписав туда отрывки нашего документа. Тот же писец изменил два других отрывка рукописи. Исследование показывает, что и здесь он думал восстановить «первоначальный» и логически правильный текст Қаланкатуаци на основании древних источников и других разделов «Истории Албании».

Грамота Елии сохранила верную датировку Партавского собора, что позволяет точно датировать собор между 27 февраля и 28 марта 704 г. Последнее обстоятельство дает возможность отнести другой албанский собор, созванный католикосом Микаелом, к концу 705 г.

В конце статьи публикуется текст новонайденного документа.